

Պատմիչի կողմից պապին ներկայացուած ծրագրին: Ինչո՞ւ Մ. Աւգերեանը չի թարգմանել այդ հատուածները, ինչո՞ւ է փոխել աշխատութեան վերնագիրը: Այս եւ բազմաթիւ այլ հարցերի պատասխանները կարող ենք հիմնաւորել հետեւեալ վարկածով. 1842 թ., երբ թարգմանում-տպագրում էր Հեթում Կոռիկոսցու այս երկը, Հայաստանի արեւմտեան հատուածը գտնւում էր Օսմանեան Թուրքիայի տիրապետութեան տակ: Այստեղ Հայ ժողովուրդը ենթարկւում էր կրօնական, ազգային, հարկային, քաղաքական ծանր ճնշումների: Նման պայմաններում հեղինակը, գուցէ զգուշանալով թուր-

քերի թշնամանքն աւելի բորբոքելու վտանգից, աշխատութեան մէջ չի ներառել մահաճակատների դէմ քրիստոնեաների նոր խաչակրաց արշաւանք սկսելու Հայ պատմիչի հարուստ ծրագիրը:

Բնականաբար, այս յղուածում մենք չենք անդրադարձել Հեթում Կոռիկոսցու երկի բնագրի եւ դրաբար թարգմանութեան բոլոր տարբերութիւններին: Բայց, կարծում ենք, վերը շարադրուածն արդէն իսկ բաւարար է՝ ցոյց տալու, որ Հեթում Կոռիկոսցու այս արժէքաւոր երկի հայերէն լրակատար թարգմանութիւնը մեծ կարեւորութիւն ունի հայագիտութեան համար:

## ՊԱՐՍԻՑ ԳՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻՆ ՏՐՈՒԱԾ ՏԻՏՂՈՍՆ ՈՒ ՊԱՏՈՒՄՆՈՒՆՆԵՐԸ

Քրիստիտ Կոստիկեան

Մատենադարանի արխիւային հաւաքածուի նմուշները, հիմնականում կապուած լինելով էջմիածնի կաթողիկոսների գործունէութեան հետ, հնարաւորութիւն են տալիս որոշակի պատկերացում կազմելու դիտարկուող ժամանակահատուածում պարսից գրագրութեան մէջ նրանց տրուած տիտղոսի ու դրա հետ օգտագործուող պատուանունների մասին:

Ժէ.-ԺԹ. դարերի պարսկալեզու աղբիւրներում, այդ թւում նաեւ՝ վաւերագրութեամբ թէ՛ Աղուանից եւ թէ՛ էջմիածնի կաթողիկոսները, ինչպէս նաեւ խոշոր վանական հաստատութիւնների վանահայրերն ու եպիսկոպոսները, հիմնականում նշուած են խալիֆա տիտղոսով: Այդ տիտղոսով էր մեծցրւում նաեւ Սպահանի հայութեան հոգեւոր առաջնորդը<sup>1</sup>:

Խալիֆա (خليفة) եզրոյթը ծագում է արաբերէն «փոխանորդ, տեղապահ» բառից եւ առաջ է եկել Մուհամմադ մարգարէի մահից յետոյ՝ անուանելու համար նրա յաջորդների իշխանութեան իրաւական կարգավիճակը որպէս նախ Աստծոյ առաքեալի փոխանորդի, ապա նաեւ՝ Աստծոյ փոխանորդի: Դեռեւս ԺԳ. դարից խալիֆա անուանումն օգտագործուած էր Հռոմկայում նստող Ամենայն Հայոց կաթողիկոսի վերաբերութեամբ արաբական աղբիւրներում՝ նկատի առնելով նրա Աստծոյ փոխանորդ կամ Քրիստոսի փոխանորդ լինե-

լու հանգամանքը<sup>2</sup>: Պարսկերէն աղբիւրներում եւս խալիֆա անուանումը հանդէս է գալիս սկսած ԺԳ. դարից՝ առաջին անգամ նշուելով Բուրհան ալ դին Անաւիի «Անֆի ալ դուլուբ» երկում<sup>3</sup>:

Առայժմ յայտնի առաջին պարսկերէն վաւերագիրը, որում «կաթողիկոս» բառը փոխարինուած է խալիֆա տիտղոսով, 1430 թ. էջմիածնի կաթողիկոս Գրիգոր Մակուեցու Ամիր Ռուստամ Օրբէլեանից գնած ու վակֆ արուած գիւղերի կալուածագիրն է<sup>4</sup>: ԺԵ. դարի վաւերագրութեամբ էջմիածնի ու Աղուանից կաթողիկոսներին տրուող խալիֆա տիտղոսի հետ զուգահեռաբար օգտագործուած էին նաեւ մեհրասիա (քրիստոնեայ բարձրաստիճան հոգեւորական - محراسيا)<sup>5</sup> կամ աղաւաղուած քաթեարոս - كاتيكوس տարբերակները<sup>6</sup>: Աղուանից կաթո-

1 هاشمی، شکوه السادات اعرابی، ارامنه جلفای نو در عصر صفوی، تهران، سازمان اسناد و کتابخانه ملی جمهوری اسلامی ایران، 1394، سند 2-21، 87 ص. 2-275، 3-351.

2 Գ. Դանիէլեան, Հռոմկայի կաթողիկոսական աթոռի պատմութեան արաբական սկզբնաղբիւրները, «Կիլիկեան Հայաստանը սահմանակից պետական միատրոսների ընկալումներում», Երեւան, 2016, էջ 218:  
3 Գ. Դանիէլեան, Գջ. աշխ., էջ 220, լղում՝ A. Peacock, An interfaith polemic of Medieval Anatolia, Islam and Christianity in Medieval Anatolia, ed. By A. C. S. Peacock, Bruno De Nicola and Sara Nur Yildiz, Ashgate, 2015, pp. 233-261:  
4 Լ. Փափագեան, Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը, II, Կալուածագրերը, պրակ Ա, Երեւան, 1968, վաւ. 5, էջ 428:  
5 Լ. Փափագեան, Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Երեւան, 1956, վաւ. 13, էջ 269:  
6 Տե՛ս Լ. Փափագեան, Հրովարտակներ, պրակ Ա, վաւ. 3, էջ 248: Ընդ որում՝ այս հրովարտակի բնագրի վրայ լեռնող յետագայ շրջանի մի քանի հրամանագրերում եւս «կաթողիկոս» է նշուած (Լ. Փափագեան, Հրովարտակներ, պրակ Բ, Երեւան, 1959 վաւ. 5, 6, նաեւ՝ Բ. Կոստիկեան, Մատենա-

դիկոսներին շարունակում էին քաթեաքոս - անուանել նաև շահ Աբբաս Ա-ի հրովարտակներում<sup>7</sup>:

Իրանում Սեֆեան ժամանակաշրջանում խալիֆա եզրոյթն առաւելապէս օգտագործւում էր սուֆիական միաբանութեան մոլորչողի<sup>8</sup> տեղակալի իմաստով<sup>9</sup>: Նոյն շրջանում կար նաև խալիֆաթ ալ-խուլաֆայի պաշտօնը, որը զբաղւում էր սուֆիական գործերով եւ միապետի անունից իր մարզկանց էր նշանակում նահանգներում: Սեֆեան շահերը խալիֆաթ ալ-խուլաֆայի եւ սուֆիների միջոցով վերահսկում էին այն ուժերը, որոնք կազմում էին նրանց յենարանը<sup>10</sup>:

Այսպիսով, այս տիտղոսը Սեֆեան շրջանում կիրառւում էր թէ՛ սուֆիական միաբանութեան եւ թէ՛ չայ քրիստոնեաների հոգեւոր առաջնորդի իմաստով:

Խալիֆաթ, խալիֆայութիւն خلافت եզրոյթը, որ նշանակում է «փոխարինում», պարսից գրագրութեան մէջ օգտագործւում էր նաև մահմեդականութեան առաջնորդի՝ շէյխ օլ իսլամի իշխանութիւնը մատնանշելու համար: Մասնաւորապէս, այդ իմաստով այն առկայ է Սեֆեան շահ Սուլէյմանի 1669 թ. հրովարտակում<sup>11</sup>:

Հարկ է նշել, որ նոյն տիտղոսը էջեր օգտագործւում Հոռմի պապի վերաբերութեամբ. նրան պարզապէս անուանում էին Ն. Մ. Հոռմի Պապ [پاپ [حرم] حضرت<sup>12</sup>:

Վրաց կաթողիկոսների վերաբերութեամբ եւս պարսից գրագրութեան մէջ երբեք էլ չի հանդիպում խալիֆա خلیفه եզրոյթը, այլ օգտագործւում է միայն կաթողիկոս کتله کوز տիտղոսը<sup>13</sup>. պատուանունները, սակայն, գրեթէ նոյնութեամբ կրկնում են Ամենայն Հայոց կաթողիկոսների տրուածները:

Դեռեւս ամենավաղ շրջանից Ամենայն Հայոց կաթողիկոսներին տրուող խալիֆա տիտղոսի հետ պարսկական վաւերագրական նիւթերում օգտագործւում էին նաև հետեւեալ պատուանունները՝ քրիստոնեաների մէջ ամենագիտուն եւ իմաստունների մէջ օրինակելի, քրիստոնէական վսեմ կրօնի եպիսկոպոսապետ (խալիֆաների խալիֆա) عمدة العلماء العيسوية اسوة الفضلاء 14: المسيحية خليفه الخلفاء فى مذهب العلى العيسويه

Սեֆեան վաղ շրջանի հրովարտակներում խալիֆա տիտղոսի հետ միաժամանակ միայն Ամենայն Հայոց կաթողիկոսների վերաբերութեամբ յաճախ օգտագործւում էր նրա՝ իր ենթակաների նկատմամբ բարձր դիրքն ու անձնական առաքինութիւնները բնորոշող պատուանունների մի մասը՝ քրիստոնեաներից լաւագոյն زیدة المسيحية կամ քրիստոնեաների գլխաւոր, առաջնորդ عمدة المسيحية 15: Այս պատուանունները

12 H. Busse, ևճ. աշխ., էջ 191: هاشمى ، شكوه السادات اعرابى، ارامنه جلفای نو در عصر صفوی، تهران، سازمان اسناد و کتابخانه ملی جمهوری اسلامی ایران، 1394، سند 7، ص. 273.  
13 Тбилисская коллекция персидских фирманов, т. I, подг. М. Тогуа, Кутаиси, 1995, док. 97, 110, 118, 149, 151, 155, 157, 159, сс. 383, 411, 425, 474, 476, 482, 485, 487.  
14 Հ. Փափազեան, Կալուածագրեր, պրակ Ա, վաւ. 4, էջ 59, 418:  
15 Ք. Կոստիկեան, Հրովարտակներ, պրակ Գ, վաւ. 1, 8, 9, 44, 56, 57, 67, 83:

դարսանի պարսկերէն հրովարտակները, պրակ Գ, Երևան, 2005 վաւ. 61):  
7 St' n Z. Փափազեան, Հրովարտակներ, պրակ Բ, վաւ. 5, 7:  
8 Մուրշիդ (مرشد) - հոգեւոր առաջնորդ, ղեկավար, կրօնական հետազոտող ունեցող առաջնորդ:  
9 دستور الملوك ميرزا رفيعا، به كوشش و تصحيح محمد اسماعيل مارچينكوفسكى، ترجمه على كردابادى، تهران، 1385، ص 562  
10 Tadhkirat al-mulūk, A manual of Safavid administration (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minor-sky, London, printed by W. Heffer and sons LTD., 1943, p. 125-126.  
11 H. Busse, Untersuchungen zum Islamischen kanzleiwesen, Kairo, Kommissionsverlag sirovic bookshop, 1959, Urkunde 16, p. 198.

ներն օգտագործւում էին նաև Նոր Զուղայի ազդեցիկ չայ խօջանների վերաբերութեամբ<sup>16</sup>: Նմանատիպ, բայց իսլամի ու մահմեդական հոգեւորականների տիտղոսների հետ օգտագործուող պատուանուններ առկայ են նաև շէյխ օլ իսլամներին ու միւս բարձրաստիճան հոգեւորականներին ուղղուած հրովարտակներում, ինչպէս օրինակ՝ Սեֆեան շահ Թահմասպի 1541 թ. հրամանագրում<sup>17</sup>: عمدة السادات و الاشراف

Այդ պատուանուններն աւելի ընդարձակ տեղ են գրաւում շարիաթական նոտարական փաստաթղթերում. «Քրիստոնեաների գլխաւոր ու այդ հաւատքի քահանաներից լաւագոյն Ուլջիլիսայի խալիֆա Փիլիպոս վարդապետ عمده المسيحيين زیدة 18: القسيسين بين نحلة بيلبوس ورتابيت خليفه اوچ كليسا Ամենայն Հայոց կաթողիկոսին մեծարող պատուանունների շարքում այս տիպի փաստաթղթերում հանդիպում է նաև «մեսիայի (Քրիստոսի) տոհմի հպարտութիւն ընորոշումը<sup>19</sup>: Երբեմն նաև շեշտւում էր կաթողիկոսի հպատակութիւնը մահմեդական իշխանութիւններին «իսլամին ու մահմեդականներին հպատակ, իր հաւատքի հետեւորդներից ու կարգակիցներից լաւագոյն Փիլիպոս խալիֆա مطيع الاسلام و المسلمين زیدة الامثال و الاقران 20: «بين نحلته بيلبوس

Մատենադարանի վաւերագրերի բնագրային հետազոտութիւնը ի յայտ է բերում որոշ օրինաչափութիւն խալիֆա տիտղոսի հետ միաժամանակ օգտագործուող պատուանունների շարքում կա-

16 هاشمى ، شكوه السادات اعرابى، ارامنه جلفای نو، ص. 287، 297، 293، 288  
17 H. Busse, ևճ. աշխ., Urkunde 6, p.171.  
18 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ա, վաւ. 63:  
19 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ա, վաւ. 64, 100ա, 101:  
20 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ա, վաւ. 65ա:

խուած հրամանագրերը հրապարակող իրանական իշխանութիւնների քաղաքական գրութիւնից, եւ պարսից տուեալ ժամանակաշրջանի գրագրութեանը բնորոշ ոճական առանձնատիպութիւններից: Այսպէս, Սեֆեան պետութեան թուլացման շրջանում, արդէն Ալեքսանդր կաթողիկոսի իրաւունքները հաստատող շահ Սուլթան Հուսէյնի 1706 թ. հրովարտակում խալիֆա տիտղոսի կողքին առկայ պատուանունների շարքը սկսում է երկարել՝ «քրիստոնեայ՝ մեծամեծների ընտրեալ առաջնորդ Զուղայի խալիֆա, Ալեքսանդր խալիֆա زیدة الامجاد والاعيان المسيحيه قنوة العيسويه خليفه اغكسندر 21: «خليفه جولا

Պատուանունների նմանատիպ մի շարք է նշուած նաև նոյն շահից 1712 թ. Ալեքսանդր կաթողիկոսի ձեռք բերած հրովարտակներում՝ «նմանների ու հաւասարների մէջ լաւագոյն, քրիստոնեաների առաջնորդ էջմիածնի Ալեքսանդր խալիֆա زیدة الاشباہ والاقران عمدةالمسيحيه الكسندر خليفه اوچ كليسيا 22:

Պատուանունների նմանատիպ շարքով է մեծարւում Ամենայն Հայոց կաթողիկոսը նաև աֆղանների կողմից նուաճուած Իրանի կենտրոնական նահանգներից հեռացած եւ իրեն Սեֆեան շահ հոչակած Թահմասպ Բ-ի հրովարտակներում՝ «քրիստոնեայ մեծանուն ու փառաբանեալ անձանց մէջ լաւագոյն Աբրահամ խալիֆա زیدة الامجاد العيسويه قنوة الافاخر المسيحيه 23: «ابراهيم خليفه اوچ كليسيا

21 Ք. Կոստիկեան, Հրովարտակներ, պրակ Գ, վաւ. 69, էջ 654:  
22 Նոյն տեղում, վաւ. 74, 77, 78-82, 84:  
23 Նոյն տեղում, վաւ. 88, 90:

Նազիր շահի հրովարտականներում Ամենայն Հայոց կաթողիկոսի պատուանունները սահմանափակվում են միմեանց համարժեք հետեւեալ արտայայտութիւններով՝ «عمدة القسيسين», «عمدة القسيسين», «اسوة الراهبين», որոնց բոլորի նշանակութիւնը նոյնն է՝ քրիստոնեայ հոգեւորականների առաջնորդ, եւ որոնք հրովարտականներում սովորաբար մէկական կամ երկուական օրինակով հանդէս են գալիս խալիֆա տիտղոսի հետ միաժամանակ<sup>24</sup>:

Նազիր շահի մահից յետոյ Աֆշարական հարստութեան ներկայացուցիչների եւ իրանում իշխանութեան համար պայքարող ու Երեւանի խանութիւնը ժամանակաւորապէս իրենց տիրապետութեան տակ առած որոշ յաւակնորդների կողմից Ամենայն Հայոց կաթողիկոսին տրուած հրովարտականներում նրա՝ խալիֆա տիտղոսին յաջորդող պատուանունների շարքը նորից սկսում է երկարել: Այսպէս, Ազատ խան Աֆղանի հրամանագրերում նշուած են հետեւեալ բնորոշումները՝ «քրիստոնեայ մեծամեծներից լաւագոյն ու պատուաւոր անձանց առաջնորդ - زبدة الاعظم»<sup>25</sup>: Պատուաւոր բնորոշումների այս շարքն էլ աւելի երկար է Քերիմ խան Վեքիլից Սիմէոն Երեւանցու ձեռք բերած հրովարտականներում: Նա թէեւ իրական ազդեցութիւն ու իշխանութիւն Հարաւային Կովկասի նկատմամբ չունէր, սակայն շրջահայեաց Ամենայն Հայոց կաթողիկոսը ջանում էր շահել նրա բարեացկամ վերաբերմունքը: Քերիմ խանի երկու հրովարտականներում Սիմէոն կաթողիկոսին մեծարող բնորոշումների շարքը բաւական երկար է. «քրիստոնեայ մեծամեծների առաջնորդ ու նրանցից լաւագոյն, քահանայապետ Ուլգիլիսայի Սիմէոն խալիֆա بقدوة الامجاد المسيحية و زبدة الاكابر العيسويه عمدة القسيسين والرهباين خليفه سيمون»<sup>26</sup>: «քերապատիւ տէր ու հաւատարիմ նուիրեալ, քրիստոնեայ մեծամեծներից լաւագոյն Ուլգիլիսայի Սիմէոն խալիֆայ مکان على عالیشان عقيدت نشان عقيدت نشان عمدة الاعظم الخليفه سيمون خليفه»<sup>26</sup>:

Հայոց «խալիֆային» մեծարող այս պատուանունների շարքն էլ աւելի երկարում է Ղաջարական ժամանակաշրջանում, թէեւ այդ թագաւորական տան հիմնադիր Աղա Մուհամմադ շահի հրովարտականներում դրանք առանձնապէս երկար չեն: Վերջինիս կողմից Ղուկաս կաթողիկոսին տրուած հրովարտականներում խալիֆա տիտղոսին նախորդում են «քրիստոնեայ մեծամեծների գլխաւոր العمدة الاعظم المسيحية» եւ «քրիստոնեայ արժանաւոր անձանցից լաւագոյն زبدة الامائل المسيحية» բնորոշումները: Այնուամենայնիւ, հէնց Աղա Մուհամմադ խանի 1795 թ. հրովարտակից<sup>27</sup> սկսած Ամենայն Հայոց կաթողիկոսի պատուանունների շարքում գործածուած է խալիֆաների խալիֆա خليفه الخلفاء եզրոյթը, որը մինչեւ այդ առկայ է միայն վերը նշուած 1430 թ. Վաղարշապատ գիւղի գնման կալուածագրում<sup>28</sup>: Այս եզրոյթը յետագայում յաճախ է օգտագործուած Յաթհալի շահի ու Աբբաս Միրզայի հրովարտականներում Ամենայն Հայոց կաթողիկոսին մեծարող բնորոշումներում:

Յաթհալի շահի վաղ շրջանի (1798-1803 թթ.) հրովարտականներում հիմնականում պահպանուած է Աղա Մուհամմադ խանի հրովարտականներին բնորոշ քիչ աւելի զուսպ ոճը. կաթողիկոսին մեծարող բառերի շարքը տեղաւորուած էր մէկ տողում՝ «քրիստոնեայ մեծամեծների վսեմաշուք»

Յաթհալի շահի վաղ շրջանի (1798-1803 թթ.) հրովարտականներում հիմնականում պահպանուած է Աղա Մուհամմադ խանի հրովարտականներին բնորոշ քիչ աւելի զուսպ ոճը. կաթողիկոսին մեծարող բառերի շարքը տեղաւորուած էր մէկ տողում՝ «քրիստոնեայ մեծամեծների վսեմաշուք»

24 Տե՛ս Ք. Կոստիկեան, Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը, հրովարտակներ, պրակ Դ, Երեւան, 2008, վաւ. 5, 6, 9, 10, 14, 15, 23:  
25 Տե՛ս Ք. Կոստիկեան, Հրովարտակներ, պրակ Դ, վաւ. 31, 32, 34, 37:  
26 Տե՛ս Առյժ տեղում, վաւ. 49, 51:  
27 Տե՛ս Առյժ տեղում, վաւ. 53:  
28 Լ. Փափագեան, Կալուածագրեր, պրակ Ա, վաւ. 4, էջ 59, 418:

24 Տե՛ս Ք. Կոստիկեան, Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը, հրովարտակներ, պրակ Դ, Երեւան, 2008, վաւ. 5, 6, 9, 10, 14, 15, 23:  
25 Տե՛ս Ք. Կոստիկեան, Հրովարտակներ, պրակ Դ, վաւ. 31, 32, 34, 37:

ընտրեալ խալիֆաների խալիֆա Ուլգիլիսայի Ղուկաս խալիֆա و زبدة الاعظم العيسويه نخبة الافاخم المسيحية خليفه الخلفاء خوكاز خليفه اوج كليسيا»<sup>29</sup> կամ «քրիստոնեայ մեծամեծների վսեմաշուքը ընտրեալ, մեծահոգի խալիֆաների խալիֆա Ուլգիլիսայի Դաւուդ (Դաւիթ) խալիֆա - زبدة الاعظم العيسويه و زبدة الافاخم المسيحية خليفه الخلفاء الكرام داود مهرايساي خليفه اوج كليسيا»<sup>30</sup>: Ընդ որում, այս պատուանունները նշուած էին ոչ միայն կոնկրետ անձի վերաբերութեամբ, այլեւ անգամ առանց որեւէ անուն կաթողիկոսի տեղապահին ուղղուած հրամանագրում<sup>31</sup>:

Ամենայն Հայոց կաթողիկոսի պատուանունների շարքը կրկնակի աւելանում է 1804 թ. յետոյ. մի տարեթիւ, որը նշանաւորում է ռուս-պարսկական առաջին պատերազմի սկիզբը: Վերը նշուած բնորոշումներին աւելանում է նոր բնորոշումների մի տող, որի հիմնական բաղադրիչները մատնանշում էին կաթողիկոսի բարձր դիրքը՝ «բարձրաստիճան ու վսեմաշուք, պատուելի ու բարեբախտ նուիրեալ عاليجاه رفيع جايجاه مجتد و مناعت انتباه عزت و اقبال»<sup>32</sup> կամ «բարձրաստիճան ու մեծաշուք, պատուարժան նուիրեալ عاليجاه رفيع جايجاه دولت و عزت دستگاه فخامت و عاليجاه رفيع مناعت اكتائه اخلاص و ارادت آگاه»<sup>33</sup>: Այդ տողից յետոյ միայն շարագրուած էին պատուանունները՝ «քրիստոնեայ մեծամեծների գլխաւոր ու նրանցից լաւագոյն العمدة الاعظم»

المسيحية و زبدة الاكابر(افاخم) العيسويه خليفه الخلفاي»<sup>34</sup>: «خليفه داود»

Բնորոշումների գրեթէ նոյնատիպ մի շարքով էին սկսուած նաեւ իրանական բարձրաստիճան պաշտօնեաների նամակներն՝ ուղղուած Ամենայն Հայոց կաթողիկոսներին, ինչպէս օրինակ՝ Միրզա Բոզորգի դայեմադամի<sup>35</sup> նամակը՝ «բարձրաստիճան պատուելի, բարեբախտ, վսեմաշուք ու գերապատիւ տէր, մեծ խալիֆաների խալիֆա Դաւուդ (Դաւիթ) - عاليجاه رفيع جايجاه عزت و سعادت همراه فخامت و مناعت همراه»<sup>36</sup>: «متانت و بسالت اكتائه عمدة الخلفاء العظام خليفه داود»

Հայոց կաթողիկոսներին պատուանունների նման երկար շարքով մեծարելը թէեւ համահունչ էր զաջարական իշխանութիւնների՝ Հայութեան հանդէպ բռնած ընդհանուր, մեծ մասամբ ձեւական, սիրաշահող տոնին, այնուամենայնիւ, առաւելապէս այդ ժամանակաշրջանում զարգացող պերճախօսութեան ու նրբագեղ համարող, ածականներով ծանրաբեռնուած լեզուական ոճի դրսեւորումն էր: Հարկ է նշել, որ զաջարական այս շրջանի հրովարտականներում նման պատուանունների երկար շարք էր ուղեկցում նաեւ այլ պաշտօնեաներին, մասնաւորապէս՝ Երեւանի խաներին, Ատրպատականի սարդար Փիր Ղուլի խան Ղաջարին, Բայազետի փաշային ուղղուած խօսքերին<sup>37</sup>:

34 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 1478, թղթ. 1ը, վաւ. 574:  
35 Միրզա Իսամ, որը յայտնի էր Միրզա Բոզորգու անուամբ, առաջին մարդն էր, որը, վարելով Ատրպատականի սադարաթի դայեմադամի պաշտօնը, կրում էր դայեմադամ տիտղոսը (عبد الرفيع حقيقت (رفيع)، وزيران ايرانى از بزرگ مهر تا امير كبير، تهران 1386، ص. 378):  
36 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 570:  
37 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 538, թղթ. 1ը, վաւ. 1475, 1483 եւ այլն:

29 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 539:  
30 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 554, 571:  
31 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 548:  
32 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 1478:  
33 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 574:

Երեւանի խանութեան գրադրութիւնը կրում էր պարսից արքունի գրադրութեան ազդեցութիւնը: 1778 թ. Հուսէյն Ալի խանի գրադրատան պետ Միրզա Մուհամմադ Մուսալլամը Սպահանից էր հրաւիրուել նախ դառնալու խանի զաւակների ուսուցիչը, ապա նաեւ գլխաւորելու խանական գրադրութեան ատեանը<sup>38</sup>: Այսպիսով, պատահական չէ, որ խանական գրադրութիւնը զարգանում էր պարսից արքունի գրադրութեանը ընդունելով, եւ հայոց հոգեւոր առաջնորդներին տրուած տիտղոսն ու պատուանունները գրեթէ անփոփոխ կրկնուում էին նաեւ խանական գրադրութեան մէջ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ էջմիածնի եւ Աղուանից կաթողիկոսները, հայոց թեմերի առաջնորդներն ու որոշ վանքերի եպիսկոպոսներ պարսից գրադրութեան մէջ ԺԳ. դարից ի վեր հիմնականում մեծարւում էին խալիֆա տիտղոսով, որը չէր օգտագործւում վրաց կաթողիկոսների եւ Հռոմի պապի վերաբերութեամբ: Խալիֆա տիտղոսի հետ միաժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոսների համար պարսից գրադրութեան մէջ գործածում էին մի շարք պատուանուններ, որոնց շարքը փոփոխւում էր՝ կրճատուելով կամ աւելանալով՝ կախուած ժամանակաշրջանի պարսից գրադրութեան առանձնայատկութիւններից, ինչպէս նաեւ՝ իշխանութիւնների տրամադրուածութիւնից:

38 Մատենադարան, Արարատու ձեռագրերի ֆոնդ, ձեռ. 233, էջ 22ա:

“Many have come here and have deceived us”:  
Some Notes on Asateur Vardapet (1644-1728),  
An Itinerant Armenian Monk in Europe\*

Sebouh David Aslanian

“The individual with his forensic characteristics is at one level the obvious and irreducible minimal unit for the historian of society (or what the economists might call the “primitive” for purposes of analysis)...” Sanjay Subrahmanyam, *Three Ways to be Alien: Travails and Encounters in the Early Modern World* (Waltham: Mass.: Brandeis University Press, 2011, 2)

In his *Chronicle of the Sacred Congregation of the Armenians belonging to the Order of Saint Anthony*, Matteos Evdokiats'i, the chronicler of the Mkhitarist order on San Lazzaro in the Venetian lagoon, has the following entry for the year 1722 regarding a peripatetic monk who wandered his way onto the island and was given a safe haven there.

And many were the clerics among the Armenian nation whose heartfelt wish was to join our Congregation, and if this were not possible to live at our convent as one among the wanderers...Among them was a certain elderly monk from Julfa whose name was Astuats'atur, who after many years of wandering around had come to Venice. Upon seeing that our Abbot had received this island of San Lazzaro and was adding buildings on it, from year to year, and that the congregation that was established there was getting stronger and multiplying also from year to year, was at once becoming famous in reputation and gaining favors in the eyes of the powerful as before the general populous of the city, he too wished to be part of our monastery. He did not expect to be welcomed as a member of the order, for he was already in his nineties, but rather to live out the remainder of his days among us as a guest at his own expense and to write out his will before a notary public and following his passing to de-

posit his belongings in the treasury of Venice and to make us the sole beneficiary of his estate if we were to keep him with us till the fruition of his life.<sup>1</sup>

\* I am grateful to Houri Berberian, Cesare Santus, Stefania Tutino, and Daniel Ohanian for offering useful suggestions on an earlier version of this paper. I would also like to acknowledge my gratitude to Sona Tajiryan and Merujan Karapetian for kindly sharing images of some of the documents used in this study. I thank Olivier Raveux for help in correcting the French transcription in the Appendix and Hanna Rich for the Latin translations. All other translations and errors are my own.

1 Matteos Evdokiats'i, *Ժամանակագրութիւն սրբազան կարգի միաձանցն Հայոց* [Chronicle of the Sacred Congregation of Armenians belonging to the Sacred Order of...], folio 297. «Բագում էին ՚ի հայկազեան սեռի մերում՝ եկեղեցականք, եւ աշխարհականք, որք ՚ի սրտէ կարի իմն ըղձանային ՚ի միաբանութիւն մեր մտանել, եւ թէ այս անհնար իցէ, գէթ իբրեւ գմի ոք ՚ի պանդխտաց ՚ի վանս մեր բնակ լինիլ. եւ ՚ի սմին յայսմ գկեանս իրեանց ազատ ՚ի զբաղանաց՝ առ ՚ի մեղաց զգուշութեամբ յաստուածային պաշտամունս հանապազորդել: Եւ այնպէս յոր ելից իրեանց գալստեան տեսուն ամենայնի արթուն զգաստութեամբ զանցինս իրեանց պատրաստ մատուցանել: Յորոց մի էր եւ ոմն Աստուածատուր անուն ծերունի վարդապետ՝ ճուղայեցի, որ ՚ի բագում ամաց հետէ պանդխտութեամբ ՚ի վեհեշ կայր: Սորայ տեսեալ՝ զի սբբայ հայրն մեր գորթոյն Ղազարու կղզին առեալ՝ ամ յամէ ըզշինուածս յաւելու ՚ի սմա. եւ միաբանութիւն՝ զոր հաստատեալն էր, ամ յամէ երթալով երթայ եւ զօրանայ՝ բազմանայ եւ բարգաւաճի. Միանգամայն եւ մեծամեծացն առաջի՝ եւ յաչս առհասարակ ժողովրդեան քաղաքիս շնորս գտեալ, քովեստիւք պերճանախ եւ գերասմ-